ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

Առաջադրանքների լուծման համար տրվում է **75** րոպե | **11-12**-րդ դասարաններ

- **Յուրաքանչյուր առաջադրանքի համար տրված պատասխաններից ճիշտ է միայն մեկը:**
- **Չլուծված առաջադրանքի համար միավորներ չեն գումարվում և չեն հանվում:**
- **Մրցույթի մասնակիցը կարող է վաստակել առավելագույնը 120 միավոր:**
- **Մրցույթի ավարտին առաջադրանքների թերթիկը մնում է մասնակցի մոտ:**
- **Մրցույթի մասնակիցներին ներկայացվող գլխավոր պահանջը առաջադրանքներն ինքնուրույն և ազնվորեն կատարելն է:**

3 միավոր գնահատվող առաջադրանքներ

1. Ո՞ր առարկան նետելը երկիմաստ կընկալվի:

Ա. ***Բ.*** ***Գ.*** ***Դ.*** ***Ե.***

2. Ամբողջացնել ժողովրդական առածը:

*Կարպետին փող չի տվել ,*_____:

Ա. ծայրին է նստում ***Բ.*** մեջտեղում է նստում ***Գ.*** գետնին է փռում
Դ. ծալած է պահում ***Ե.*** անխնամ է վարվում

3. Նախադասություններից որո՞ւմ Գիտունիկը սխալ գտավ:

Ա. Ես պահանջեցի, որպեսզի չհուշեն:
Բ. Արամն ուզում է, որ բոլորը գան:
Գ. Դա ոչ թե կեղծիք էր, այլ բացահայտ սուտ:
Դ. Մենք ոչ թե չուզեցինք, այլ չկարողացանք այդ աշխատանքը կատարել:
Ե. Գևորգը հաճախում է ոչ միայն ֆուտբոլի, այլև լողի:

4. Ի՞նչ նշանակող բառեր կկազմվեն մնացած տառերով, եթե *հայթայթել* և *հաշվեհարդար* բառերից յուրաքանչյուրում ջնջենք կրկնվող տառերը:

Ա. երաժշտական գործիք ***Բ.*** ազգություն ***Գ.*** գործվածք
Դ. շինանյութ ***Ե.*** ձայնարկություն

5. «***Անունը կա, ամանում չկա»*** առածը նշանակում է՝

Ա. Աման կա, որ անուն չունի:
Բ. Ամեն անանուն բան աման չէ:
Գ. Խաբուսիկ արտաքին ունի, չի համապատասխանում ներքինին:
Դ. Ամանի տակը ծակ է, դրսից չի երևում:
Ե. Ինչ կա-չկա, այդ ամանում կա:

6. Ո՞ր բառն է բաց թողնված Համո Սահյանի հետևյալ տողերում:

Անթեղի վրա կատուն է ննջում,
Իսկ անթեղի տակ՝ հոգնած _____ *:*

Ա. տերը ***Բ.*** ձագուկը ***Գ.*** կրակը ***Դ.*** սրտիկը ***Ե.*** խխունջը

7. Գտի՛ր բերված տառային ծածկագրի ճիշտ լուծումը:

Ա. 2980	***Բ.*** 1025	***Գ.*** 4028	***Դ.*** 1890	***Ե.*** 2405	ԳԻՐՔ
+	+	+	+	+	+
2980	1025	4028	1890	2405	ԳԻՐՔ
5960	2050	8056	3780	4810	ՄԻՏՔ

8. Բերված բառազույգերը, բացի մեկից, կազմվել են որոշակի օրինաչափությամբ: Ո՞րը չի համապատասխանում օրինաչափությանը:

Ա. սիրակարոտ-ոտնաման ***Բ.*** նավատորմ-որմնադիր ***Գ.*** ջրաման-մանրաթել
Դ. փորձանոթ-նոթատետր ***Ե.*** սահադաշտ-աշտեակիր

9. *Մայրը՝ երկու ամսական,*
Որդին շուկայում առնտուր է անում: (ժողովրդական հանելուկ)

Ա. ծով և գետ ***Բ.*** կաղամբի գլուխ ***Գ.*** վարունգի թուփ և վարունգ
Դ. Բազազ Արտեմ ***Ե.*** գորտ և շերեփուկ

10. Ո՞ր բառակապակցության բառերի միջև «հակասություն» չկա:

Ա. անհանգիստ հանդարտություն ***Բ.*** խոսուն լռություն ***Գ.*** արթմնի քուն
Դ. հավակնոտ միտք ***Ե.*** անխոս խոստովանություն

4 միավոր գնահատվող առաջադրանքներ

11. Ո՞ր տոնի անվանումն է գաղտնագրված նկարելուկով:

Ա

Ա. ԿԱՂԱՆԴ ***Բ.*** ՎԱՐԴԱՎԱՌ ***Գ.*** ԲԱՐԵԿԵՆԴԱՆ
Դ. ՆԱՎԱԿԱՏԻՔ ***Ե.*** ԾՈՎԱԶԱՐԴ

12. **ՄԵՂԱՆԻ, ԴԻՐ, ՎՐԱ** բառաշարքի բոլոր բառերով և պատասխանի տարբերակներում տրված բառերից որո՞վ են կազմվում իմաստով իրարից տարբեր առնվազն երկու նախադասություն: Բառերի տեղերը կարելի է փոխել, վերջավորությունները՝ ոչ:

Ա. ապուր ***Բ.*** գինի ***Գ.*** թթու ***Դ.*** հյութ ***Ե.*** օղի

13. Բաղաձայնների արանքից ջնջվել է միևնույն տառը: Վերականգնելով այն՝ կստանաս *մեղանչում* բառի հականիշը: Տրված տառերից ո՞րը կընտրես:



Ա. ի ***Բ.*** ա ***Գ.*** ու ***Դ.*** ե ***Ե.*** ո

14. Անահիտը կազմում է նախադասություն և գրում դրա բառերն առանց միջակայքերի: Հետո նա բաժանում է գրվածը պատահական տեղերից, մասերը խառնում իրար ու ստանում հետևյալը. **ԶԱՆ ՐՆԱ ԱՎՈ ԸԵԿ ԿԱՊ ԱՎ**: Ի՞նչ նախադասություն էր կազմել Անահիտը:

Ա. Ավազակ Ավոն ընկավ ավազանը: ***Բ.*** Կապավոր Նազանը եկավ:
Գ. Ավազը պարկերով տարան: ***Դ.*** Նազանը պարանը տարավ:
Ե. Նա զանազան կապեր ունի:

15. Ո՞ր բառի հոմանիշներն են «բացատրել», «գնալ», «երկարել» բառերը.

Ա. գալ ***Բ.*** մեկնաբանել ***Գ.*** պարզել ***Դ.*** կարճանալ ***Ե.*** մեկնել

16. Ամենաշատը քանի՞ դուռ կբացես ***դուր, դրացի, դրկից, դռնբաց, դրանդի, դուրս, դուրեկան, դռդռոց, դանդուռ, դռներդուռ*** բառերին մոտիկից ծանոթանալիս:

Ա. 4 ***Բ.*** 5 ***Գ.*** 6 ***Դ.*** 7 ***Ե.*** 8

Վերահրատարակումը միայն համաձայնությամբ «Այբ» ի

17. *Մի բան գիտեմ զարմանալի,*
Նա մագիլներ ունի հավի,
Մութ անտառն է իրար տալիս,
Հարթում սիրուն ու ետ գալիս: (ժողովրդական հանելուկ)

Ա. գերանդի ***Բ.*** եղան ***Գ.*** քամի ***Դ.*** անգղ ***Ե.*** սանր

18. *Մրսած մի տոթ կա օդում,*
Լուռ մի որոտ կա օդում,
Ամպը շրթունք է արել,
Ամպրոպի հոտ կա օդում:

Քառատողի տողերից որո՞ւմ կամ որոնցո՞ւմ կա(ն) անհամատեղելի թվացող արտահայտություն(ներ):

Ա. 1-ինում ***Բ.*** 2-րդում ***Գ.*** 1-ինում և 2-րդում
Դ. 1-ինում և 4-րդում ***Ե.*** 2-րդում և 3-րդում

19. ԱՐՈՏ(1), ԱՐԿՂ(1), ԱՍՈՂ(3), ԼՃԱՓ(1) բառաշարքի օգնությամբ Նաիրին բառ է մտապահել: Փակագծերի թվերը ցույց են տալիս, թե այդ բառի և բառաշարքի տվյալ բառի մեջ քանի ընդհանուր տառ կա, ընդ որում՝ նույն դիրքերում: Նաիրիի մտապահած բառն է՝

Ա. լճակ ***Բ.*** լսող ***Գ.*** որոր ***Դ.*** աղոտ ***Ե.*** ստոր

20. Պատասխանի տարբերակներում բերված շրջաններից որի՞ հատվածներում գրված բոլոր վանկերն օգտագործելով՝ հնարավոր չէ բառ ստանալ:



5 միավոր գնահատվող առաջադրանքներ

21. Պատասխանի ո՞ր տարբերակում են իրար համապատասխանում հայկական առածների սկիզբն ու ավարտը:

1. Ամռան որ պառկես հովեր, ա. ասավ. «Էստեղ լավ է, քանց մեր տուն»:
2. Խուլին հարսանիք էին անում, բ. ասում է. «Էս ի՞նչ դմբդմբոց է»:
3. Հարուստին ասիր. «Բարով մաշես», գ. որ աղքատը փայտ չունի:
4. Ձյունն ի՞նչ գիտի, դ. ձմռան կսատկեն կովեր:
5. Գիժը գնաց հարսանքատուն, ե. աղքատին ասին. «Էդ որտեղի՞ց»:

Ա. 1-դ, 2-ա, 3-գ, 4-բ, 5-ե ***Բ.*** 1-ե, 2-բ, 3-գ, 4-դ, 5-ա ***Գ.*** 1-դ, 2-ա, 3-ե, 4-գ, 5-բ
Դ. 1-գ, 2-բ, 3-ե, 4-դ, 5-ա ***Ե.*** 1-դ, 2-բ, 3-ե, 4-գ, 5-ա

22. Ո՞ր դարձվածքն է պատկերված նկարելուկով:

Ա. Աչքով աչք չունենալ:
Բ. Աչքի սևն ու սպիտակը տեսնել:
Գ. Աչքի վրա հոնք կա:
Դ. Աչքից արտասուք քամել:
Ե. Աչքի սևը սպիտակ անել:

23. Բառերի ո՞ր եռյակը քառակուսու մեջ լրացնելիս քառակուսու տողերով և սյուներով՝ վերևից ներքև, ներքևից վերև, ձախից աջ, աջից ձախ, կկարդանք բառեր:



Ա. համ, ինի, նիշ ***Բ.*** թազ, գութ, գահ ***Գ.*** արա, լաթ, կիթ
Դ. սաթ, ազի, թիվ ***Ե.*** առու, բահ, հուշ

24. Տրված տառերով և ո՞ր ձայնավորով է հնարավոր կազմել ութտառանի մի բառ: Տրված տառերի տեղերը չեն փոխվում:
ՏՐՆԽՏ

Ա. ու ***Բ.*** ե ***Գ.*** ո ***Դ.*** ի ***Ե.*** ա

25. Եթե բառերը բաժանվեն բանակների, ապա ո՞ր բառազույգերի բառերը նույն բանակում չեն հայտնվի:
1. անպաճույճ – անշուշտ *2. պարծենալ – պերճաբանել* *3. փապար – փական*
4. այգ – արշալույս *5. ագուցել – ամրացնել*

Ա. 3, 4 ***Բ.*** 1, 2, 4 ***Գ.*** 2, 5 ***Դ.*** 1, 3 ***Ե.*** 1, 3, 5

26. Բառերից մեկը չի ենթարկվում ինչ-որ օրինաչափության: Ո՞ր բառն է դա:

Ա. խենթ ***Բ.*** հեղգ ***Գ.*** մարտ ***Դ.*** խիստ ***Ե.*** շունչ

27. ԽԵ, ՂԱՏ, ՋԵ, ՉԱ, ՃԵ ընտանիքների անդամները հերթ էին կանգնել՝ ***թր*ել, զի*ել, զեղ*, զղ*ալ, խռ*ակ, աղ*ատել, զմրու*տ, խե*դել, ջա*ջա*ել, շռ*ք, պ*տոր, ցողաթաթա*, շի*ուկ, չղ*ինկ*** շարքում աստղանիշերի փոխարեն իրենց տեղերը զբաղեցնելու համար (ՋԵ ընտանիքի անդամներն են ***ջ*** տառերը): Շարքը լրացնելուց հետո պատասխանիր, թե տարբերակներում բերված որ պնդումն է ճիշտ:

Ա. ՋԵ ընտանիքի նոր անդամների թիվը երեք անգամ ավելի է շարքում մինչ այդ նույն ընտանիքի ունեցած անդամների թվից:
Բ. ՂԱՏ ընտանիքի նոր անդամների թիվը մեծ է ԽԵ ընտանիքի նոր անդամների թվից:
Գ. ՉԱ և ՃԵ ընտանիքների նոր անդամների թիվը հավասար է:
Դ. Ընտանիքներից մեկը շարքում նոր անդամ չունեցավ:
Ե. Բոլոր տարբերակները ճիշտ են:

28. Խառնենք, լուծենք, քիմիական փորձ անենք, կստանանք՝

Ա. ջրնեգոյուղ ***Բ.*** ջրսնձղապպա ***Գ.*** մրեղանամ
Դ. ադրավակչկա ***Ե.*** գիրթակաեր

29. ***Տունկ, հունդ, ածուխ, մուրճ, պարկ, սանձ, հայց, սանդ, շունչ, վարկ*** բառերից մեկը չի ենթարկվում մի ընդհանուր հետաքրքիր օրինաչափության: Ո՞ր բառն է դա:

Ա. տունկ ***Բ.*** հունդ ***Գ.*** շունչ ***Դ.*** մուրճ ***Ե.*** սանձ

30. ***Չին ֆիզիկոսը, օճառաջուրը ցողելով, բժշկում է հայ զնդապետի փքված ձախ թևը:*** Ընդգծված նախադասությունը կազմվել է շատ հետաքրքիր յուրահատկությամբ, որը վերաբերում է՝

Ա. օճառաջրի ֆիզիկական հատկություններին.
Բ. հայ-չինարեն բառարանի ստեղծմանը.
Գ. հայոց այբուբենի բոլոր տառերին.
Դ. հայոց այբուբենում տառերի այբբենական կարգին.
Ե. հայոց այբուբենի տառերի թվային արժեքին:

Հեղինակային իրավունքը պատկանում է «Այբ»-ի